

12.06.96թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՎԱԴԵՄԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Բնագրի իրավունքով

ԶԱՏԻԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԵՎՈՐԳԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1918-1920 թթ.

(ղետական, սոցիալ-տնտեսական և մշակութային
կյանքի հիմնահարցերը)

Մասնագիտությունը.- Հայոց լատմություն Զ.00.01

Պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճան հայցելու ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 1996

Աշխատանքը կատարվել է Երևանի պետական համալսարանի հայոց պատմության ամբիոնում:

Գիտական ղեկավար՝ ակադեմիկոս Ա.Գ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Խորհրդական, պատմական գիտությունների դոկտոր՝ Վ.Ն.ՂԱԶԱՐՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմ. գիտ. դոկ. Հ.ՄԵԼԻՔՍԵՅԱՆ
պատմ. գիտ. թեկն. Ա.ՀԱՅՈՐՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի խորհրդային անվան հայկական մանկավարժական ինստիտուտի հայոց պատմության ամբիոն

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2-րդ 1996 ՀՀՊԱԱ
պատմության ինստիտուտի պատմական գիտությունների դոկտորի գիտական
աստիճան շնորհող 004 Հայոց պատմության մասնագիտական խորհրդի նիստում
/ 375 019, Երևան - 19, Մարշալ Բաղրամյան 24 գ / ժամը 13-----

Ատենախոսության հետ կարելի է ծանոթանալ ՀՀ ՊԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրը առաքված է

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար՝

Ա. ՄԵԼԻՔՍՅԱՆ

ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ԱՐԻԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀՐԱՏԱՊՈԹՅՈՒՆԸ

1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Անդրկովկասի իշխանությունները, որոնք ձգտում էին վարել անկախ քաղաքականություն, Բրեստի պայմանագրից դուրս, արդարացի, պայմանագիր կնքել Թուրքիայի հետ, իրենց վարած քաղաքականությամբ ավելի խորացրին երկրամասի տնտեսական քայքայման գործընթացը, հայ ժողովրդի համար ստեղծելով գոյատևման դժվար պայմաններ, երբ նա միայնակ պետք է պայքարի ելներ իր ֆիզիկական գոյությունը պաշտպանելու համար:

Հայ ժողովուրդը չէր կնչեց ասեղ վտանգի առաջ և ազգային ուժերի միահամուռ գործունեությամբ հակահարված ավեց հայկական կնճիղը մեկընդմիջում էր ծեղու շտապող դարավոր թշնամուն և կոեց իր Ազատ ու Անկախ հայրենիքը:

Հայ ժողովրդի համար մակառաքական նշանակություն ունեցող այդ տարիների ուսումնասիրությունը գանվում է պատմաբանների ուշադրության կենտրոնում: Գիտական շրջանառության մեջ են մտել տարբեր գնահատականներ, որոնք, սակայն, հիմնականում հենվում են զաղափարական, կուսակցական սկզբունքների վրա, շատ հաճախ սովորի մեջ թողնելով պատմական իրականությունը:

Ուսումնասիրվող թեման ունի գիտական և արդիական նշանակություն: Պատմական մշմարտությունը քացահայտելու և մեր դրույթները հիմնավորելու նպատակով ձգտել ենք մասնավորապես մեծ տեղ տալ արևիվային փաստաթղթերին: Դրանք նաև կովաններ են ծառայել իրարամերժ տեսակետներում միշտ կողմնորոշվելու համար, տեսակետներ, որոնք այսօր էլ կարիք ունեն լայն մեկնաբանությունների ու վերլուծությունների, քանզի մեր նորահաստատ երրորդ հանրապետությունը, նրա կայացման գոյամարտը շատ ընդհանուր գծեր ու աղբյուրներ ունի առաջին հանրապետության հետ:

ՈՒՍՈՒՄԱՄԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսությունը նպատակ է հետապնդում որոշակի պարզեցում մտցնել հայ ժողովրդի 1918-1920 թթ. պատմության բազմաթիվ խնդիրներից առավել քիչ հետազոտված Հայաստանի ներքին իրավիճակի հարցերում:

Ժիշտ է, առ այսօր ուսումնասիրողները անդրադարձել են այդ խնդիրներին, սակայն դրանք ամբողջ խորությամբ ու մակարդակով չեն ներկայացված: Բազմազան ու տարրուկ նաև այս խնդրից առանձնացվել են միայն առանձին հարցեր, որի հետևանքով կատարված ուսումնասիրությունները չեն տալիս հանրապետության ներքին իրավիճակի ամբողջական պատկերը:

Այստեղից էլ, ներկա ատենախոսության նպատակը և խնդիրը՝ ուսումնասիրել և տալ իրադարձություններով հարուստ Հայաստանի ներքին կյանքի գրեթե ամբողջ-

շական պատկերը:

Մեր աշխատանքը այս ուղղությամբ առաջին փորձերից է: Մենք բնավ էլ չենք կարծում, որ սպառել ենք հիշյալ հարցի բոլոր կողմերի ուսումնասիրությունը և գտնում ենք, որ Հայաստանի առաջին հանրապետության ներքին կյանքի, ինչպես նաև նրա պատմության մյուս բնագավառների ուսումնասիրությունը դեռ երկար ժամանակ կմնա հետազոտողների ուշադրության կենտրոնում:

ՌԻՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈՐՇԱԿԱՆ ՆՇԱՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Քանի որ առ այսօր չկա հիմնահարցի ամբողջական պատկերը ներկայացնող որևէ ուրիշ ուսումնասիրություն, ապա ատենախոսության թեման՝ հանրապետության ներքին իրավիճակի քննությունը ստանում է նորությունի ընդունելի:

Հանրապետության ներքին իրավիճակի, պարենային մզածամի, գաղթականության, որբախնամ աշխատանքների, մշակույթի, կրթության և այլ բնագավառների առնչությամբ հանգել ենք տեսակետների, որոնք մեծի մասամբ չեն համընկնում շրջանառության մեջ գտնվող կարծիքներին:

Նշանակետ ունենալով մշարիտ իրականության բացահայտումը սկզբնաղբյուրների ու զրականության օգնությամբ լուսաբանել ենք, այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ հանրապետության հոչակման, առաջին աշխարհամարտի տարիներից սկսված ժողովրդական տնտեսության անկումային գործընթացը, այն աղետալի կացությունը, որի մեջ հայտնվել էր Հայաստանը: Հաստատելով, որ մինչև 1918 թ. մայիսը արդեն իսկ առկա էին դեպի երկրի ժողովրդական տնտեսության քայքայումը տանող գործոնները, առավել դուրսին է դարձել ուսումնասիրվող ժամանակաշրջանի Հայաստանի ներքին դրության ամբողջական գնահատումը: Այդ հենքի վրա է հասակեցվում հանրապետության կառավարության ու Խորհրդի, ապա պառլամենտի գործունեության արժեքավորումը, մարմիններ, որոնք հանդիպելով դժվարություններով հարուստ կացությանը, իրենց ողջ կարողությունները ուղղում էին այդ ու օրածին մյուս խնդիրների հաղթահարմանն ու լուծմանը: Եվ, այնուամենայնիվ, նրանց փորձերը չէին պսակվում մեծ արդյունքներով և ավարտվում էին ժամանակավոր ազդեցություն գործելով, ասել է, թե միայն կասեցվում էր քայքայման ու կործանման գործընթացը: Եւ որ երկիրը գուրկ էր այդ խնդիրները արմատապես լուծելու հնարավորությունից:

Ատենախոսության գործնական նշանակությունն այն է, որ նրանում օգտագործված արխիվային փաստաթղթերի մեծ մասը գիտական շրջանառության մեջ են մտցվում առաջին անգամ և կարող են ապագա ուսումնասիրությունների համար

ծառայել որպես սկզբնաղբյուր: Բո՛հ-երի ուսանողները ատենախոսությունը կարող են օգտագործել նպատակային ու թեմատիկ մշակումների համար: Ընթերցողի համար ատենախոսությունը, տպագրվելու դեպքում, օգտակար կլինի տվյալ պատմական ժամանակաշրջանի մասին հավաքական կարծիք կազմելու տեսանկյունից:

ՀՅՍՍՏՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆԻԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը գրված է ազատ շարադրանքի սկզբունքով, զուրկ է քաղաքական ու կուսակցական որևէ ազդեցությունից, հիմնական նպատակ է ունեցել մշարտության բացահայտումը, հեռու է այս կամ այն զաղափարական ներգործությունից, նրան տուրք տալու մտայնությունից:

ԱՏԵՆԱՒՈՒՄԻԹՅԱՆ ՓՈՐՇԱԿԱՆԻԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել է Երևանի պետական համալսարանի հայոց պատմության ամբիոնում, ՀՀ ԱԱ պատմության ինստիտուտի 1918-1920 թթ. պատմության խմբում:

Ատենախոսությունը մշակվել է Երևանի պետական համալսարանի հայոց պատմության ամբիոնում:

Ատենախոսության հետ կապված հարցերի առնչությամբ հեղինակը տարբեր գիտական հանդեսներում հրատարակել է վեց հոդվածներ: Մամուլում հանդես է եկել շուրջ հարյուր հաղորդումներով ու հոդվածներով, մասնակցել է տարբեր ինստիտուտներում կազմակերպված կոնֆերանսներին, հեռուստատեսությամբ վարել է, Հայաստանը 1917-1921 թթ., երեքմասնից երեք հաղորդումը:

ԱՏԵՆԱՒՈՒՄԻԹՅԱՆ ԱՂԲՑՈՒՐՆԵՐԸ

Ներկայացվող աշխատանքի շարադրման համար որպես սկզբնաղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության Պատմության կենտրոնական Պետական /ՀՀՊԿՄ/, Հայաստանի Հանրապետության հասարակական և քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական Պետական, Հայաստանի Պատմության թանգարանի, Մատենադարանի, Հայաստանի Հանրապետության նորագույն պատմության կենտրոնական պետական արխիվներում պահպանվող փաստաթղթերը: Ավելի քան 27 ֆոնդերի շուրջ հազար գործերում տեղադրված փաստաթղթերը անգնահատելի արժեքավորում ունեցող վկայություններ են, որոնց օգնությամբ փորձել ենք պարզեցում մտցնել, հարթել ու մշակել հանրապետության պատմության կնճռոտ մի քանի հարցեր:

Հայաստանի առաջին հանրապետության պատմությունը միշտ էլ գտնվել է

պամբարանների, տնտեսագետների, գյուղատնտեսության, արդյունաբերության ժողովրդական տնտեսության խնդիրներով զբաղված քաղաքական ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Դժբախտաբար նրանցից շատ քչերին է հաջողվել հետու կանգնել կուսակցական, գաղափարական դիրքերից, որի պատճառով ծնվել են մշմարտությանը անհարիր որակումներ ու գնահատականներ: Միայնակներում ու հայրենիքում տպագրված 62 աշխատություններում, ուսումնասիրություններում, հուշարում, տաս ժողովածուներում, 25 թերթերում, տասը ամսագրերում կան անսպառ քանակի նյութեր, որոնք անաշու, անկողմնակալ մոտեցման դեպքում հնարավորություն են տալիս լույս սփռել հանրապետության մեզ հետաքրքրություն ներկայացնող հարցերի վրա:

Գրականության ու մամուլի օգտագործումն, առավել նպատակային դիտելու համար այն բաժանել ենք խմբերի: Առաջին խմբում ընդգրկված են այն աշխատությունները, մենագրություններն ու ուսումնասիրությունները, հուշագրությունները, որոնք վերլուծում են Անդրկովկասի 1918 թ. քաղաքական իրավիճակը¹:

Արժանին գնահատելով հեղինակների կատարած աշխատանքը, հատկապես նրանցից շատերի որպես ժամանակակցի ու ականատեսի վկայությունները, անկարելի է չհիշատակել, որ նորից իր խոսքն է ասել կուսակցական հայեցակետը, ինչի պատճառով, մեր կարծիքով, նրանց որոշ եզրակացություններ ու գնահատականներ անկարելի է ընդունել, ինչպես օրինակ Ե. Գեղամյանի, Ա. Շրգնկյանի, Հ. Պուրջյանի, Գ. Նարաշյանի, Վ. Նավասարդյանի և ուրիշների տեսակետները, որոնց նկատմամբ շարադրանքում մեր դիրքորոշումները նկատելի են ու պարզորոշ:

Իմի բերելով գրականության նկատմամբ մեր արժեքավորումը, ասենք նաև, որ հեղինակներից շատերը պահպանել են պատմագիտական անողորմությունը, ինչը մեզ հնարավորություն է տվել հանգելու համապատասխան եզրակացություններին:

1. Զ. Ավալով, Վրաստանի անկախությունը միջազգային քաղաքականության մեջ 1918-1921 թթ., Փարիզ, 1924, տես, Հայրենիք, ամսագիր, 1935, թիվ 5, 6: Ա. Բաբայան, Էջեր Հայաստանի անկախության պատմությունից, Գահիրե, 1959: Ե. Գեղամյան, Տաճիկները Պովկասում և Բաքվի անկումը, Բաքու, 1919: Ա. Ներզնկյան, Աշխատավորության դատարանին, թիֆլիս, 1927: Հ. Պուրջյան, Սարդարապատի հերոսամարտը, Երևան, 1969: Կ. Իզմիրլյան, Հայ ժողովրդի քաղաքական մակառադիրը անցյալին և ներկայիս, Բեյրութ, 1964: Լեոնյանցյալից, թիֆլիս, 1925: Ա. Պատիսյան, Հայաստանի հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968: Ա. Հովհաննիսյան, Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը, Երևան, 1923: Գ. Նարաշյան, Անդրկովկասի քաղաքական կյանքը 1918 թ., թիֆլիս, 1919: Վ. Նավասարդյան, Հայաստանի անկախությունը, Ժնև, 1934: Լ. Շանթ, Մեր անկախությունը, Ե. Գ. Գ. Մ. Մանուկյան, Երկեր, Գ. 3, Երևան, 1958: Դուրբեն, Հայ հեղափոխականի մի հիշատակները, Գ. Ե. Կոստանյան, 1952: Վրացյան, Հայաստանի հանրապետությունը, Փարիզ, 1928:

Գրականության երկրորդ խմբում ընդգրկվել ենք այն աշխատությունները, որոնք ուսումնասիրում են հանրապետության ներքին հարաբերություններն ու կացության հետ կապված խնդիրները: Այստեղ մեզ համար շահեկան են հանդիսացել այն աշխատությունները, որոնք արժեքավոր վերլուծություններից բացի, ներկայացնում են գնահատելի վկայություններ ու փաստեր:

Հեղինակները, սակայն, բնականաբար տուրք տալով ժամանակի տիրող գաղափարախոսությանը, այդ տարիների պատմությունը ներկայացրել են միակողմանի, իշխանության վրա քարդելով հանրապետության տնտեսական դժվարությունների, մզնաժամային իրավիճակի, դրանք ծնող գործոնների իդլ պատասխանատվությունը¹: Պայքարի դիրքերից դիտարկելով կառավարող կուսակցության գործունեությունը նրան մեղադրել են գրեթե բոլոր հարցերում, անտեսելով, որ Հ. Յ. Դաշնակցությունը նախածոնողն էր համաժայռողական կառավարությունների կազմման, որից խուսափում էին հայ քաղաքական կուսակցությունները և անհաշտ պայքար մղում խորհրդարանի, կառավարության ու ՀՅԴ դեմ, ստեղծելով կառավարական մզնաժամերի նախապայմաններից մեկը²:

Հանրապետության ներքին հարցերը իրենց յուրահատուկ մեկնություններն են նստցել մամուլի կողմից: Ժամանակակցից մամուլը հրատապությամբ արձագանքելով իրադարձություններին, արժեքավոր ներդրումներ են ներկայացնում խնդրո առարկայի ասպարեզում, նաև իր ամբողջ սրույթամբ անդրադառնում են այն անախ դժվարությունների նկարագրությանը, որի մեջ խրված էր շրջափակված վիճակում գտնվող հանրապետությունը: Թեև հսկայացավ մեկնաբանություններն ու նեն իրենց յուրահատուկ տեղը հանգուցային որոշ խնդիրների լուծման բնագավառում, բայց նկատելի է նորից կողմնակալության սկզբունքը, որի հենքը կուսակցական մտայնությունն է, դեպքերն ու իրադարձությունները ցանկալի ներկայացնելը³:

- 1 Մ. Ադունց, Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և սոցիալ-տնտեսական միտքը 20-րդ դարի սկզբին, Երևան, 1968: Խ. Ավալով, Երևան, Հողային հարցը Արևելյան Հայաստանում /1911-1917 թթ./, Երևան, 1959: Ա. Գրիգորյանց, Հայաստանի քանդակող դասակարգը 40 տարում, Երևան, 1950: Ս. Հարությունյան, Դրվագներ Հայաստանի գյուղատնտեսության զարգացման պատմությունից, Երևան, 1966: Ար. Սարգսյան, Գյուղացիության դրությունը նախառվեռական Հայաստանում /1900-1920/, Երևան, 1948: Պ. Պակերյան, Սովետական Հայաստանի արդյունաբերությունը 1920-1940 թթ., Երևան, 1966: Ս. Սարգսյան, Սովետական Հայաստանի հայ մամուլը /1918-1921/, Երևան, 1968:
- 2 Ե. Աղայան, Հոկտեմբերյան ռևոլյուցիան և հայ ժողովրդի ազատագրումը, Երևան, 1960, Գ. Գալոյան, Մայիսյան-հերոսական ապստամբությունը, Երևան, 1960, Հ. Էլչիբեկյան, Ա. Հակոբյան, Ուրվագներ սովետական Հայաստանի պատմության, Երևան, 1954, Հ. Կարապետյան, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, 1920, Երևան, 1961, Գ. Նարապետյան, Պայքար սովետական իշխանության համար Հայաստանում, Երևան, 1954, Եր. Մնացականյան, Վ. Ի. Լենինը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Երևան, 1963, Մ. Ներսիսյան, Դաշնակցության, Դաշնակցության, կամ սովի ու մահվան աշխարհը, Երևան, 1932, Վ. Պարսամյան: Նոյեմբերյան հեղափոխությունը Հայաստանում, Երևան, 1932:

3 Ժողովածուների, ամսագրերի, թերթերի ցանկը տես շարադրանքի վերջում:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից և եզրակացությունից:

Ներածությունում հիմնավորված է թե ինչպիսի կարևորություն, այժմեականություն ու հրատապություն ունի ուսումնասիրվող հարցը, նրա պատմական ու քաղաքական նշանակությունը, արված է օգտագործված սկզբնաղբյուրների ու գրականության տեսությունը:

Առաջին գլխում¹, քաղաքական իրադրությունը Անդրկովկասում 1918 թ. և Հայաստանի հանրապետության հռչակումը, , , շարադրված է երկրամասի քաղաքական նկարագիրը, վերլուծված են տարածաշրջանի իշխանությունների վարած քաղաքականության առավել կարևոր մարզերը, մենչեիկ-մուսավթական քրդի ծրագրված ու կողմնորոշված գործունեությունը սկզբունքները և դրանց կործանարար հետևանքները հայ ժողովրդի համար:

Նշված հարցերի լուսաբանման նպատակով օգտագործել ենք ժամանակակիցների հուշերը, պատմական ուսումնասիրությունները, հասարակական ու քաղաքական գործիչների գրքերը: Դրանք, չնայած իրենց իրարամերժությանը, այնուամենայնիվ, ընդհանուր պատկերացում են տալիս թեմայի առանձին հարցերի մասին, ուղենիշ ծառայում պատմական բարդ ժամանակահատվածի ուսումնասիրության համար: Որպեսզի առավել դյուրին լինեի կողմնորոշվելը, օգտագործված գրականությունը բաժանել ենք երկու խմբի: Առաջինում տեղ ենք տվել Արկոմեդի /Գ.Նարեկյան/, Բ.Բորյանի, Ա.Մերգելյանի, Լեոյի /Ա.Բաբախանյան/, Ս.Վրացյանի, Ալ. Թաթևյանի և այլոց հուշերին ու ուսումնասիրություններին: Երկրորդ խմբում ընդգրկված են Ա. Հովհաննիսյանի, Ս.Սեֆի, Ծ.Աղայանի, Գ.Գալոյանի, Գ.Նարեկյանի, Լ.Թուրշուզյանի, Մ.Ներսիսյանի, Վ.Միքայելյանի, Հ.Ավետիսյանի և շատ ուրիշների ուսումնասիրություններն ու մենագրությունները, որոնք, ինչպես և առաջին խմբում առանձնացվածները, թեև գուրկ չեն կողմնակալությունից, բայց լիարժեք պատկերացում են տալիս ոչ հեռավոր անցյալի իրադրությունների, երկրի կացության վերաբերյալ, հանգում ընդունելի շատ եզրահանգումներին:

Ընդհանուր կարծիքը միանշանակ է՝ Անդրկովկասի քաղաքական դեպի մոտ կանգնած կուսակցությունները, նրանցից առաջին հերթին գերիշխանության հասած վրացական մենչեիկները չկորոզացան, միաժամանակ չկամեցան միասնական մեկտեղվել, որի շնորհիվ, ամենայն հավանականությամբ, հնարավոր կլինեի փրկագույնից փրկել թե երկրամասի անտեսությունը, թե պայմաններ ստեղծել թուրքական ներխուժման վտանգը կանխելու համար:

— Ժիշ էր Լեոն, երբ գրում էր. , , Երեք ազգությունները իբր թե միացան: Կարծում էին, թե միացում նշանակում է երեքով մի սենյակի մեջ նստելը,¹:

1 Լեո, Անցյալից, Քիֆլիս, 1925, էջ 366:

Քաղաքական տարանջատումը, Ազգային Խորհուրդների գոյություն պայմաններում ստեղծված երկիշխանությունը չէին խոստանում երկրամասի ժողովուրդներին, առավել ևս հայ ժողովրդին անվտանգություն ու ապահովություն: Մենչեիկ-մուսավթական քրդը իրականացնում, պաշտպանում և առաջ էր տանում սեփական ազգային շահը, ունենալով Գերմանիայի ու Թուրքիայի հովանավորությունը, մեկուսացնում ու հարվածների թիրախ դարձնում հայ ժողովրդին:

Տրապիզոնի ու Բաթումի բանակցությունները, Սեյմի ցրումը, մինչ այդ երկրամասի անկախության հայտարարումը այն ծրագրերի իրականացումն էին, որոնց հետամուտ էր Թուրքիան: Վերջինիս նպատակն էր նախ երկրամասը անջատել Ռուսաստանից, նրա առաջ պատնեշ ստեղծել, ապա կայացնել ազգային պետություններ, դրանք իրենց թուլությունը ու անօգնականությունը դարձնել Թուրքական բռնապետության կցորդներ, որի պայմաններում, հանգամանքների բարենաշնոր ու նպաստավոր ելքի դեպքում, ամենայն հավանականությամբ կլուծվեի նաև հայ ժողովրդի հետագա գոյապահպանության խնդիրը:

Այսպիսի ծանր կացության մեջ մեկուսացված ու հարվածի տակ էին մնում թե հայ ժողովուրդը, թե նրա ազգային կուսակցություններն ու առաջին հերթին Հ.Յ.Ռաշնակցությունը: Սակայն դարավոր թշնամու համար կատարվեց անըսպասելին: Հայ ժողովուրդը հուժկու հարված հասցրեց պանթուրքիզմի պլաններին և արյան գետով կերտեց իր անկախությունը: Հանրապետության ծնունդը արժեքավորվում է հատկապես այս տեսանկյունից:

Փաստական նյութերի հիման վրա հանգել ենք այն տեսակետին, որ հանրապետության ծնունդը ոչ թե այս կամ այն ուժերի, Թուրքիայի թողալովության արդյունք էր, այլ հայ ժողովրդի մաքառման ու հաստատակամության, գոյատևման համար նրա հերոսական պայքարի արդյունքը:

Երկրորդ գլխում², Հայաստանի հանրապետության պետական կառուցվածքը, օրենսդիր և գործադիր մարմինները, , , շարադրված են խնդրի առավել կարևոր ապարեզները, ներկայացված են հիշյալ մարմինների գործունեության, փոխհարաբերության հանգույցները, արժեքավորվել և հնարավոր խորությամբ լուսաբանվել են օրենսդիր և գործադիր մարմինների գործունեության տարբեր կողմերը:

Արձարծված հարցի առթիվ իբրև եզրակացություն կարելի է ընդգծել, որ հանրապետության բարձրագույն իշխանությունը անկարող գտնվեց կարգավորել երկրի խառնաշփոթ կացությունը, օրենք հասկացությունը չմոտեցրեց ժողովրդին, այդ չափազանց կարևոր բնագավառը թողնելով սաղմնային վիճակում: Գործադրության ընդունելով ցարիզմի, ժամանակավոր կառավարության, անդրկովկասյան իշխանությունների օրենքները, ժողովրդին հարազատ օրենսդրական ակտերի բացակայության պայմաններում երկրում անարգել տարածվում էին հանցագործությունները, ստեղծելով ներքին ծանր ու անկայուն վիճակ:

Երրորդ գլխում³, Հայաստանի ներքին դրությունը, , , մանրամասն ըըն-

նության ենք առել երկրի ներքին ամխիթար, տնտեսական դժվարութիւններով լի կացութիւնը, վերլուծել այդ երևույթն իր բոլոր կողմերով: Ժողովրդին սովի միրաններից զրկելու ուղղութիւնը կառավարութեան ջանքերն ավարտվում էին անհաջողութեամբ: Դրա հիմնական պատճառը ներքին սահմանափակ հնարավորութիւններն էին:

Պարենապոքման մզնածամը մեղմելու համար կազմակերպվել էին երկու նախարարութիւններ, ընդարձակ լիազորութիւններով, որպեսզի ժամանակին ու առաջ լուծումներ գտնեն: Մինչդեռ դա չէր իրականանում: Իսկ երբեմն էլ նախարարութիւնները, մի կողմից և պառլամենտը, մյուս կողմից, ոչ թե համագործակցում էին, այլ շփոթակալով իրար, ավելի էին խմոճում գործը:

Սովից բացի, մարդկային զգալի կորուստներ էին հասցնում նաև վարակիչ ու տարափոխիկ հիվանդութիւնները: Բնակչութեանը բժշկական օգնութիւն ցույց տալու նպատակով, դեռևս 1918 թ. ներքին գործերի նախարարութիւնում բացվեց բժշկա-սանիտարական բաժինը: Մեկ տարի անց, բաժնի ջանքերով բացվել էին 48 հիմնարկութիւններ¹, երկու լազարեթ, 30 գյուղական կետեր: 1919թ. երկրի տարբեր շրջաններում աշխատում էին 68 բժիշկներ, 35 ղեկավարներ, բժշկական միջին անձնակազմի անդամներ³, 1600 մասնակալներով հիվանդանոցներ, 5 բժշկական, 15 ֆելդշերական կետեր⁴:

Մինչև 1919 թ. դեկտեմբերի 1-ը, միայն գյուղական վայրերում, բժշկական օգնութիւն էին ստացել 237 հազար, հիվանդանոցային բուժում 14 հազար մարդ:

Թեև բերված փաստերը վկայում են, որ կատարվել էր նկատելի աշխատանք, բայց այն հեռու էր բնակչութեան կարիքները ապահովելուց, որովհետև, հաշվումների համաձայն, երկրի մեկ միլիոնից ավել բնակչութեանը բժշկական օգնութիւն ցույց տալու համար անհրաժեշտ էին 85 հիվանդանոցներ, 115 դեղատոմսեր⁶:

Երրորդ զլխում առանձին բաժին է հատկացվել գյուղատնտեսութեանը, որտեղ փորձել ենք վերլուծել տվյալ բնագավառի տարբեր կողմերը:

Հայաստանը հանդիսանալով տիպիկ ագրարային երկիր, ամբողջ տնտեսութիւնը հենվում էր գյուղատնտեսութեան վրա, բնականաբար նրա առաջընթացի ու զարգացման մեջ էր գտնվում տնտեսական դժվարութիւնների հաղթահարման ուղին:

1 ՀՀՊԵՊԱ, ֆ.205, ց.1, գ.136, թ.40:

2 Նույն տեղը, գ.129, թ.1, թ.11:

3 Նույն տեղը, մ.3, թ.324:

4 Նույն տեղը, թ.374:

5 Նույն տեղը, գ. 129, թ.874:

6 ՀՀ ՀԲԽՖ ԿՊԱ, ֆ.4047, ց.1, գ.367, թ.4-5:

Առաջին աշխարհամարտը, թուրքական ավազակային հարձակումները, Անդր-կովկասի իշխանութիւնների քաղաքականութիւնը խաղացին վատթար դեր Հայաստանի գյուղատնտեսութեան համար:

Հանրապետութեան գյուղատնտեսութիւնը աչքի էր ընկնում ոչ միայն հողաշակութեան նահապետական ձևերի առկայութեամբ, այլև ցածր բերրիութեամբ, ոռոգման համակարգի անբավարարութեամբ: Գնալով խորացող այս երևույթի պատճառով, որի դեմ կառավարութիւնը միջոցներ չունէր պայքարելու, 1918-1920 թթ. ոռոգելի հողատարածութիւնները կրճատվեցին 37 հազար հեկտարով¹:

Ցանքատարածութիւնների կրճատման հետ մեկտեղ ընկնում էր նաև հողի բերրիութիւնը, որը 1913 թ. համեմատութեամբ, 1919 թ. անկում ապրեց 4,5 անգամ²:

Ջգացվում էր գյուղատնտեսական գործիքների ու քաշող ուժի մեծ պահանջ, որովհետև խիստ կրճատվել էր անասունների զլխաքանակը: Այսպես, եթե էշմի-ածնի 4,5-րդ, Ալեքսանդրապոլի 1-ին, Նոր Բայազետի 2-րդ, Ելեւոպկայի 1-ին, Երևանի գավառի Կոտայքի, Ղամախուի, Ղարաբաղի խաչի գավառի Զալալօղլի 3-րդ գավառամասերում բնակչութեան յուրաքանչյուր 100 հոգուն հասնում էր 250 զլուխ անասուն, ապա 1919 թ. իջավ 35 զլխի, կամ անասունների զլխաքանակը կրճատվեց 87,9 տոկոսով³:

Ինչպես ցույց են տալիս փաստերը, Հայաստանի գյուղատնտեսութիւնը, որ հանդիսանում էր ժողովրդական տնտեսութեան հիմքը, գտնվում էր աղետալի վիճակում: Հանրապետութեան կառավարութիւնը քաջ գիտակցում էր, որ տնտեսութեան զարգացումը պետք է սկսել գյուղատնտեսութիւնից: Բայց, դժբախտաբար, ընդունված օրենքներն ու որոշումները, հատկացված միջոցները չէին խաղում այն դերը, ինչն անհրաժեշտ էր պարենային մզնածամը գտնելու համար:

Գյուղատնտեսութեան կայունացումն ապահովելու գործում մեծ դեր կարող էր խաղալ հողային հարցի լուծումը, որն հայ գյուղի առանցքային խնդիրներից մեկն էր: Վիճակագրական տվյալների համաձայն միայն Նոր Բայազետի, Աշտարակի, Սուրմալուի, Սարգարապատի, Վաղարշապատի, Ապարանի, Դարալագյազի գավառներում հողի կարիք ունեին 187 772 տեղացի չքավորներ ու զաղթականներ⁴:

Այստեղից էլ, հողային խնդրի լուծումը ունէր համապետական խոշոր նշանակութիւն: Բայց գործելով դանդաղ ու անվճարակա, կառավարութիւնը պատշաճ ուշադրութիւն չդարձրեց այս բնագավառին: Անժխտելի է, որ պառլամենտը անհետաքննաբերաբար այս վիճակից, փորձեր էր անում լուծում տալ հարցին: Սակայն կազմված Հողային Կոմիտեներն ու Հատուկ Մարմինները գործում էին

1 , Հայաստանի գյուղատնտեսութիւնը 40 տարում, , Երևան, 1960, էջ 39:

2 Նույն տեղը, էջ 66:

3 ՀՀ ՊԵՊԱ, ֆ.1, ց.1, գ.4, թ.1,4,6,10:

4 ՀՀ ՊԵՊԱ, ֆ.205, ց.1, գ.806,թ.25, գ.689,թ.28-29,գ.562, մ.2, թ.301:

դանդաղ, անարդյունավետ և փոխանակ լուծելու վեճերն ու բարդությունները, իրենց անկարողությամբ ավելի էին խմբում հարցը, լարում իրավիճակը:

Պնդել, թե գյուղատնտեսության զարգացումը կաշկանդող երևույթները սկիզբ էին առնում պաշտամունքից ու կառավարությունից, անարդար կլիին, որովհետև կաշկանդիչ հզոր գործոնները գտնվում էին երկրի տնտեսական քայքայվածության, սահմանափակ հնարավորությունների, հաղորդակցության անմիջապես վիճակի, արտաքին կապերի բացակայության մեջ:

Արդյունաբերության ու բանվորության խնդրի հետ կապված հարցերը վերլուծել ենք առանձին բաժնում:

Գյուղատնտեսության քայքայող գործոնները իրենց բացասական ազդեցությունն ունեցան նաև արդյունաբերության վրա: Հումքի բացակայության պատճառով փակվում էին գործարաններն ու արհեստանոցները: 1913 թ. տնտեսության մեջ 23,1 տոկոս տեսակարար կշիռ ունեցող արդյունաբերությունը 1919թ խիստ նվազեցրել էր իր մակարդակը, այն հասցնելով 13,1 տոկոսի:¹

Հայաստանի արդյունաբերությունը աչքի է ընկնում ոչ միայն ցածր արտադրողականությամբ, այլև ցածր էներգազինվածությամբ: Երկրի 13 էլեկտրակայանները 1913 թ. արտադրել էին 1,7 միլիոն կիլովատ ժամ էլեկտրաէներգիա, իսկ 1920 թ.՝ մեկ միլիոն, այսինքն, մեկ բանվորի տարեկան էլեկտրազինվածությունը կազմում է 60000 կիլովատ ժամից էլ պակաս:

Արդյունաբերության կազմավորված վիճակի պատճառով էլ երկրում աճում էր արդյունաբերական ապրանքների պահանջարկը:

Մինչև 1919 թ. կառավարության արդյունաբերությունը վերականգնելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները ավարտվեցին անհաջողությամբ: Երկրի սպառված հնարավորությունները բացառում էին որևէ տեղաշարժ: Կառավարության մեծ չափերի հասնող վարկերը անկարող էին վերականգնել արդյունաբերությունը: Հումքի բացակայությունը, դրանք գնելու և Հայաստան տեղափոխելու դժվարությունները, արգելքները, հաղորդակցության միջոցների անբավարար գործունեությունը ձեռնարկված քայլերը զրկում էին իրականանալու հնարավորությունից: Նման պայմաններում միայն ձեռներեց որոշ արդյունաբերողների էր հաջողվում պայմաններ ստեղծել իրենց ձեռնարկությունների գոյատևման համար: Դրանց թըվում էր Ալեքսանդրապոլի օժանդի գործարանը, որն ամսական արտադրում էր 3000 փուխ օժանդ:

1919 թ. կառավարությունը ձեռնարկեց արհեստանոցներ բացելու չափազանց կարևոր աշխատանքը: Հանրապետության մի շարք շրջաններում, նկատի ունենալով ավանդական արհեստների տարածման հանգամանքը, բացվեցին գորգագործական, կա-

1. Սովետական Հայաստանը 35 տարում, , , Երևան, 1955, էջ 48:

2. Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը 1920-1960 թթ., , Երևան, 1960, էջ 74, 86:

3. Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում, , Երևան, 1932, էջ 89:

հույսի, բամբակամշակության և այլն արհեստանոցներ, որոնք ծրագրի համաձայն, տնտեսության կայունացման պայմաններում վերածվելու էին մանր ու միջին ձեռնարկությունների: Բայց ներդրված հսկայական միջոցները չծառայեցին իրենց նպատակին, որովհետև այս անգամ էլ իրենց վճարական դերը խաղացին հումքի, սարքավորումների, հաստոցների, դազգահների ինչպես հայթայթման, այնպես էլ երկիր տեղափոխելու դժվարությունները:

Արդյունաբերության հարցերով զբաղվող խնամատարության ու Աշխատանքի նախարարության հիշատակության արժանի գործերից էր բանվորական օրենսդրության, ութամյա աշխատանքային օրվա, նվազագույն աշխատավարձի մասին օրենսգծերի մշակումը: Աշխատանքային օրվա մասին օրինագիծը թեև հաստատվեց պաշտամունքի կողմից, բայց այն հաճախ էր խախտվում գործատերերի կողմից, որը և պատճառ դարձավ մի նոր օրենքի ընդունման, որով վեցամյա բանտարկություն էր սահմանվում ութամյա աշխատանքային օրվա մասին օրենքը խախտողների նկատմամբ:¹

1920 թ. պաշտամունքը քննարկեց նվազագույն աշխատավարձի մասին օրինագիծը, հավանություն տվեց դրան: Սակայն օրինագծի գործադրումը հետաձգվեց, որովհետև երկրի անկայուն տնտեսական վիճակը այն կայանքի կոչելու հնարավորություն չէր տալիս: Լրացնենք, որ թանկության ու պարենային մզնածամի պայմաններում նվազագույն աշխատավարձի սահմանումը չէր բարելավելու բանվորության տնտեսական վիճակը:

Պարենավորման մզնածամը մեղմելու հնարավոր ուղիներից մեկը արտաքին շահավետ առևտրի կազմակերպումն էր: Սակայն այդ հարցերով զբաղվող պետական հաստատություններն ու Հայկոտպը ժամանակին չէին արձագանքում օրածին պահանջներին ու մեծ դժվարությամբ կուտակված աղը, բամբակը, մորթիները, մյուս հում նյութերը չէին արտահանվում, նրանց գները ընկնում էին և միայն այդ ժամանակ էր կատարվում փոխադրությունը և հանրապետությունը փոխանակ շահեր ապրանքափոխանակությունից, տուժում էր:

Շարադրանքում բերված են փաստեր, որոնք ապացուցում են, որ ընայած եղած փոքրի շատե հնարավորություններին, հանրապետության առևտրական հաշվեկշիռը խոսում էր ի վնաս երկրի պահանջների, որովհետև գերակշռությունը ոչ թե արտահանության կողմն էր, այլ ներմուծման: Բացի այդ, արտաքին առևտրի շահավետությունը խանգարում էր նաև պետական միջամտությունը: Տուրք էր նշանակվում անգամ պարենամթերքների, առաջին անհրաժեշտության ապրանքների վրա, որը արգելակում էր առևտրական գործարքների տարածումը, թե ներքին, թե արտաքին շուկայում, փոխանակ խրախուսվելով ազատ առևտուրը: Առևտրական հարաբերությունների նման վիճակի պատճառը նկատի ունենալով էր, որ զեկուլացարկներից մեկը ընդգծում էր, թե. , , . . . ներկա Հայաստանի սահ-

1. , , Խորհրդային Հայաստան, , , 1921, թիւ 242:

մաններում եղած ապրանքները, եթե վերցնենք հազիվ թե նրանք հավաքար լինեն 1916-1917 թվականների 2-3 խանութների մեջ պահվող ապրանքներին, :¹

Պարենային ճգնաժամը խորանում էր նաև ապրանքա-դրամական անհամապատասխան հարաբերությունների պատճառով: Պարենային խնդիրը կարգավորելու, թանկության հանգույցը լուծելու ուրիշ ելք չունենալով, կառավարությունը ավելացնում էր դրամանիշերի թողարկումը: Բայց նոր թղթադրամների շրջանառության մեջ մտնելը ունենում էր հակառակ ազդեցությունը, որի հետևանքով բարձրանում էին ապրանքների ու մթերքների գները, ընկնում էր դրամի գնողունակությունը: Այսպես օրինակ, 1919 թ. թուրքական մեկ ոսկին արժեք հայկական 400 ո., ռուսականը՝ 500, ցարական մեկ ռուբլին՝ 300-350, ժամանակավոր կառավարության ռուբլին՝ 1500, թուրքական մեկ թղթադրամը՝ 36 ո. և այլն:²

Պարենավորման ու տնտեսական ալլ խնդիրները լուծելու հույսերից մեկն էլ հարկերն էին: Բայց տարվա սկզբին նշանակված հարկերի չափերը դրամի արժեքագրված պայմաններում, տարվա վերջին, կամ հավաքման ժամկետում հասնում էին չնչին չափերի:

Մահմանված էին 22 ուղղակի և 27 անուղղակի հարկեր, որոնց թիվը, նորից դրամի արժեքագրված պատճառով, ավելանում էր նոր, ժամանակավոր հարկերով, որի նպատակը ելքի ու մուտքի հաշվեկշիռը պահպանելն էր: Սակայն նման միջոցառումները ևս ավարտվում էին անհաջողությամբ, որովհետև բնակչության աղքատացման հետևանքով պակասում էր վճարունակ բնակչության քանակը, ավելանում անաշխատ սպառողների թիվը: Եթե 1913 թ. Հայաստանում հաշվվում էր մոտ 188 հազար չքավոր ու միջակ գյուղացի,³ ապա 1920 թ. նրանց թիվը հասավ մոտ 366 հազարի:⁴

Պարենային ճգնաժամի խորացմանը նպաստում էին նաև հաղորդակցության միջոցները: Այս հարցում ևս հանրապետությունը ծանր ժառանգություն էր ստացել: Սկսյի ցրումից հետո վրաստանն ու Ադրբեջանը իրենց վերցրեցին երկաթուղային արանսպորտի առյուծի բաժինը, Հայաստանին թողնելով խափանված ու շարքից դուրս եկած շոգեքարշեր, ապրանքատար ու մարդատար վագոններ: Իսկ մինչ այդ, Հայաստանում եղած հաղորդակցության միջոցները ավերել ու թալանել էին թուրք բարձրաստիները: Այն, ինչ հնարավոր էր, նրանք տարել էին, մնացածը վերածելով մեռադյա կույտների:

Վիճակն ավելի էր սրվում վառելանյութի պակասի պատճառով: Մուսավաթականները ունենալով հեռահար նպատակներ, հրաժարվում էին հանրապետությանը վառելանյութ վաճառել կամ էլ պահանջում էին միայն տարադրամով առաքելական գներ:

1 ՀՀ ՊԽՊ, ֆ.209, ց.1, գ.14, թ.27:

2 Նույն տեղը, ֆ.201, ց.1, գ.43, թ.98:

3 Նույն տեղը, ֆ.205, ց.1, գ.806, թ.25, գ.563, մ.2, թ.381, գ.632, թ.28, 29:

Հաղորդակցության միջոցների անբավարար գործունեության պատճառով երկրի մի մասում եղած մթերքները չէին տեղափոխվում պահանջարկ ունեցող շրջաններ, արտահանության համար կուտակված հում նյութերը մնում էին պահեստներում: Դրույթյունը շակելու կամ կարգավորելու ուրիշ հնարավորություն չունենալով, կառավարությունը օգտագործում էր փոխադրության ցանկացած միջոց, նրանց տերերին կատարելով առավել վճարումներ: Սակայն այս բոլոր միջոցառումները կրում էին ժամանակավոր բնույթ, խնդիրները լուծվում էին ոչ հիմնավոր, խզված էին մնում թե երկրի ներքի, թե արտերկրի հետ կապերը, հետևողականորեն իրականացվում էր հանրապետության շրջափակման քաղաքականությունը:

Ի մի բերելով պարենային ճգնաժամի վերլուծությունը, հանգել ենք այն տեսակետին, որ այն արդյունք էր հանրապետության քայքայված տնտեսության ու շրջափակության, որից դուրս գալու բոլոր փորձերը հանդիպում էին թշնամական ուժերի համառ ու անզիջում դիմադրությանը:

Հանրապետության ներքին անմխիթար վիճակն իր ամբողջ ծանրությամբ ընկնում էր ամենաանապահով զանգվածների՝ զաղթականության ու որբերի վրա: Օգտագործելով պատերազմի ընձեռած հնարավորությունները, թուրք բարձրաստիները իրականացրին հայկական հարցի լուծման իրենց հրեշավոր ծրագիրը: Ջարդերից մազապուրծ հայությունը, սկսած 1914 թ. դեկտեմբերից, սկսեց զաղթել Արևելյան Հայաստան: Դալված 1918 թ. թուրքական ավազակային հարձակման հետ, զաղթականության հոսքը հասավ ավելի լայն չափերի: Պետական օգնության բացակայության պայմաններում, մինչև հանրապետության կառավարության գործունեությունը, զաղթականության ու որբերի խնամքի գործը իրենց վրա էին վերցրել էջմիածնի Սինոդը, զանազան հասարակական ու հայրենասիրական կազմակերպություններ: 1918 թ. օգոստոսի 6-ին Հայաստանի Խորհրդում ներկայացնելով կառավարության ծրագիրը, վարչապետ Հ.Քաջազնունին հայտարարեց, որ պետությունը այսուհետ հոգավոր է զաղթականության կացության մասին: 1918 թ. սեպտեմբերի 28-ին օրենք ընդունվեց կարիք ունեցող զաղթականության խնամատարության մասին, իբրև կառավարությունը պարտավորվում էր աշխատունակ զաղթականներին ապահովել աշխատանքով, անաշխատներին հատկացնել նպաստներ: Գաղթականները բնակեցվելու էին լքյալ գյուղերում, աշխատավոր ծեղքի համեմատ նրանց տրամադրվելու էր հող:¹

Գաղթականության օգնությունը առավել իրական դարձնելու նպատակով որոշվեց նախ պարզել զաղթականների թիվը, ապա հանրապետությունը բաժանելով զաղթականական շրջանների՝ օգնությունն ու միջոցառումները իրականացնել ծրագրավորված:

Չնայած գործադրված ջանքերին ու ծախսված միջոցներին, զաղթականության վիճակը չէր բարելավվում: Նրանց ոչ թե անհրաժեշտ էր հասցնել նյութական

1 ՀՀ ՊԽՊ, ֆ.199, ց.1, գ.7, թ.8-9:

օգնություն, այլ հիմնավորապես լուծել առաջնահերթ խնդիրները, որպեսզի անաշխատ սպառողների այդ հոծ զանգվածը հնարավորություն ունենար ստեղծել իր սեփական տնտեսությունը, դառնար նստակյաց և թեթևացներ պետության հոգսերը:

Վերը ներկայացված ու մի շարք այլ կնճռոտ խնդիրներ, ինչպես, օրինակ, զաղթականության ու որբերի թվի մշտումը, նրանց ցույց տված տնտեսական ու թժշկական օգնությունը, որքանազան աշխատանքների հետ կապված այլ հարցեր լուսաբանվել է հանգամանալից և մեծամասամբ արխիվային փաստաթղթերի օգնությամբ, հանգելով համապատասխան եզրակացությունների:

Լուսավորության ու մշակույթի հարցերը քննության ենք առել վերջին՝

չորրորդ գլխում:

Հանրային կրթության և արվեստի նախարարությունը ստացել էր Երևանի նահանգի ժողովրդական դպրոցների տեսչության ծանր ժառանգությունը: Տեսչության ավյալներով 1918 թ. Հայաստանում գործում էին 87 դպրոցներ, որոնցից 18-ը երկդասյա էին, 69-ը մեկդասյա, 8500 աշակերտներով:

Նշված դպրոցներից բացի գործում էին Երևանի, Աշտարակի, Նոր Բայազետի բարձրագույն տարրական դպրոցները: Հիշատակված 87 դպրոցներից 57-ը հայկական էին, 17-ը՝ ռուսական, 9-ը՝ թուրքական, 3-ը՝ քրդական, 1-ը՝ ասորական: Դպրոցների նշված քանակից դուրս էին 64 եկեղեցական ծխական դպրոցները, ուր սովորում էին 6163 աշակերտներ:¹

Նրբական գործի ծանր կացությունը իր վրա բևեռեց կառավարության ուշադրությունը: Երկրի ծով կարիքների պայմաններում գտնվում էին միջոցներ, որոնք թեև նվազ չափերով, բայց խաղում էին իրենց դրական դերը: Դրանով էլ պետք է բացատրել այն հանգամանքը, որ 1918 թ. գործող 151 դպրոցների փոխարեն մեկ տարի անց՝ 1919 թ. հանրապետությունում գործում էին 456 դպրոցներ, առանց Լոռու և Ջանգեզուրի շրջանների:²

Գնալով կրթական համակարգը ժամանակի պահանջներին համապատասխանեցնելու հրամայականի մասնադրյով, հանրապետության գյուղական ու քաղաքային դպրոցներում ուսուցումը տարվելու էր մասնագիտական եղանակով, այսինքն՝ քաղաքային դպրոցներում ուսուցանվելու էին արհեստներ, գյուղականներում՝ դաշտավարություն և անասնապահություն:

Ասել, թե դպրոցները ապահովված էին բոլոր առումներով, չի համապատասխանի իրականությանը: Ֆինանսական ծանր վիճակի պատճառով դպրոցները ժամանակին չէին ստանում նախաաշխիվներով սահմանված գումարները, աշխատավարձը ստանում էր ձգձգումներով, զգացվում էր գրեթե անկասկածելի խիստ կարիք, դպրոցական շենքերի զգալի մասը զբաղեցված էին զաղթականների ու զինվորականության կողմից: Երկարատև զբաղումը լուսններից հետո, պաշտպանության միջա-

1 ,,Աշխատավոր,, , 1919, №1, 130:

2 Խուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, Լոս Անժելոս, 1952, հ. 5, էջ 283:

մտությունները շենքերն ազատվեցին, բայց լուծում չստացավ դրանք վերանորոգելու խնդիրը:

Թեև ֆինանսա-տնտեսական ծանր վիճակին, բայց կառավարության ու տեղական իշխանությունների ուշադրությունից դուրս չէին մնում արտադրողական հասկի երեխաների դաստիարակության հոգսերը:

Այդպիսի մի նախաձեռնությամբ հանդես եկավ Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարությունը, որը իր միջոցների հաշվին որոշեց բացել երկու մանկապարտեզ: Կառավարության հավանության արժանացած այս միջոցառումը դրվեց ի ցույց, որպեսզի տեղական իշխանությունները չսպասեն կառավարության թեղադրանքներին ու համակցումներին և իրենք տեղեկություն հանդես գան սեփական նախաձեռնություններով:¹

Իրենից հատուկ դժվարություն էր ներկայացնում միջնակարգ դպրոցների խնդիրը: Այստեղ նույնպես գործունեություն արգելակման պատճառները նույնն էին, բայց մի տարբերությամբ, որ միջնակարգ դպրոցները առավել շատ էին զգում մանկավարժական կադրերի պակաս:

Միջնակարգ դպրոցներում ուսուցումը տարվելու էր 5-6 տարի ժամանակով, մասնագիտական թեքումներով՝ պատմա-լեզվագրական, ֆիզիկա-մաթեմատիկական և մասնագիտական, որի ուսուցումը սկսվելու էր չորրորդ դասարանից:

Բացի պետական ու ծխական դպրոցներից, ելնելով հանրապետության հնարավորություններից, կառավարության թույլտվությամբ բացվելու էին նաև մասնավոր դպրոցներ:

Նկատի ունենալով օր-օրի սաստկացող պարենային մզնամը, սկսած 1918թ. կառավարությունը ուշադրության կենտրոնում էր պահում մանկավարժների աշխատավարձի խնդիրը: Բայց անընդհատ կատարվող վճարումների բարձրացումը չէր օգնում գործին: Այդ էր պատճառը, որ առաջարկվելու էր արվում ուսուցիչներին ևս դասել պետական պաշտոնյաների շարքին ու նրանց տալ այն նպաստները, ինչ որ ստանում էին պաշտոնյաները:²

Մանկավարժական կադրերի պակասը լրացնելու նպատակով Երևանում ու Ալեքսանդրապոլում բացվում էին ժամանակավոր դասընթացներ,³ զինապարտության տարիքի ուսուցիչները ազատվում էին զինվորական ծառայությունից և այլն:⁴

Հաղթահարելով դժվարությունները, Հանրային կրթության և Արվեստի նախարարությանը հաջողվեց, սկսած 1919 թ., դպրոցներն ապահովել որակյալ դասագրքերով: Հրապարակի վրա էին, առաջին դասարանի համար՝ ,,Դասընթաց,, , ,,Լուսաբեր,, , ,,Աղայան,, , ,,Նալբանդյան,, , մինչև վեցերորդ դասարանը՝ նույնն ու ,,Փայլուն արև,, , ,,Հայ հեղինակներ,, , ,,Հայոց լեզու,, դասագրքերը:⁵

1 ՀՀ ԿԽՍՍ, ֆ.105, ց.1, գ.2776, թ.4:

2 Նույն տեղը, ֆ.207, ց.1, գ.110, թ.58, գ.8, թ.2:

3 Նույն տեղը, գ.112, մ.3, թ.171:

4 Նույն տեղը, գ.110, մ.2, թ.58:

5 Նույն տեղը, գ.49, մ.2, թ.56:

Առանձնակի հոգատարութիւն էր ցուցաբերում արեւմտահայ դպրոցների նը-
կատմամբ, որոնց վիճակը համեմատաբար ավելի ծանր էր: Գրեթէ 45-ի հասնող
այդ դպրոցների համար միջոցներ էին հայթհայթվում դասագրքեր ու շենքեր
հատկացնելու, դրանք բարեկարգելու նպատակով:¹

1919 թ. սկզբից հանրապետութիւնում սահմանվեց ժրի ու պարտադիր տար-
րական ուսուցում:²

Հանրապետութեան գոյութեան առաջին օրվանից զգացվում էր թե կրթական
համակարգում, թե տնտեսութեան տարբեր բնագավառներում որակյալ կադրերի
պակասը: Սկսած 1919 թ. կառավարութիւնը աշխատանքներ էր տանում համալ-
սարանի բացման համար: Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարութիւնը եր-
կու նամակով դիմեց կառավարութեանը առաջարկելով քաղաքի թեկնածութիւնը:
ինքնավարութիւնը պարտավորվում էր համալսարանի համար հատկացնել դասա-
սենյակներ, բնակարաններ՝ դասախոսների համար: Քննելով տրված առաջարկը,
որոշվեց համալսարանը բացել Ալեքսանդրապոլում: 1920 թ. հունվարի 30-ին
քաղաքում հանդիսավոր պայմաններում բացվեց համալսարանը, որտեղ աշխատում
էին երկու պրոֆեսորներ, վեց պրոֆեսորի օգնականներ, երկու օտար լեզուէն-
րի դասախոսներ: Համալսարանում սովորում էին 291 ուսանողներ, որոնցից
139-ը՝, կողմնակի ունկնդիրներ,, էին:³

Համալսարանի դիրեկտորը իրավունք ուներ սովորականից բարձր աշխատա-
վարձ առաջարկելով, հրավիրել նոր դասախոսներ:

1920 թ. հունիսի 4-ի նախարարների Խորհրդի որոշմամբ համալսարանը տե-
ղափոխվեց Երևան: Պատմաաբանութիւնն այն էր, որ դասախոսներից շատերը
հրաժարվում էին Ալեքսանդրապոլում աշխատելու առաջարկներից: Համալսարանը,
թեև տնտեսական ու քաղաքական սրված իրադրութեանը, երբեք չընդհատեց աշ-
խատանքները և մասնակի փոփոխութիւններ կրելուց հետո շարունակեց իր գոր-
ծունեութիւնը նաև խորհրդայնացումից հետո:

1919 թ. հունիսի 5-ի օրենքով Հանրային կրթութեան նախարարութիւնը
վերակազմվեց անվանվելով Հանրային կրթութեան և Արվեստի նախարարութիւն:⁴
Արվեստի բաժինը շուտով նախածնունդ շուրջ տասնյակ հասնող թանգարանների
բացման աշխատանքները, կառավարութիւնից պահանջելով լրացուցիչ հատկա-
ցումներ: Դրանց թվում նշանակալից էր հանրային գրադարանի բացման առաջար-
կը, որի նախածնունդը Գ.Լևոնյանն էր: Նպատակի իրագործման համար նախարա-
րութիւնը կոչվելով դիմեց հանրապետութեան ազգաբնակչութեանն ու համայն հա-
յրութեանը:⁵

Թիֆլիսում, Բաքվում, հայաշատ այլ վայրերում բացվեցին ընդունման կետեր
և հավաքված գրքերը մեծ դժվարութեամբ տեղափոխվեցին Երևան: Իսկ Բաքվում

1 ՀՀ ՊԽԱ, գ.46, մ.1, թ.122:
2 Նույն տեղը, գ. 114, թ.6:
3 Նույն տեղը, գ. 337, մ.3, թ.218:
4 ՀՀ ՊԽԱ, ֆ.4047, ց.1, գ.455, թ.3:
5 ՀՀ ՊԽԱ, ֆ.207, ց.1, գ.26, թ.5:

հավաքված գրքերն ու ուսական կայսրութիւնում մեծ մանալում գտած հայ
բարեգործական ընկերութեան հարուստ գրադարանը պետականացվեցին:

Արվեստի բաժինը մեծ հոգատարութեամբ ծնունդ կեց ու բարեհաջող ավարտի
հասցրեց Երևանում թատրոնի բացման գործը: 1920 թ. հունվարից Երևանում
վերաբացվեց ու իր գործունեութիւնը սկսեց ձամփուլոյանի թատրոնը:

Թատերական արվեստի զարգացմանն ու դերասանական կադրերի պատրաստման
էր ուղղված Վարդան Միրզոյանի թատերական ստուդիայի գործունեութիւնը:¹

Աշխատանքներ էին տարվում պետական երաժշտանոցի բացման ուղղութեամբ,
ծրագրավորված էր քաղաքներում երաժշտական դպրոցների բացումը:²

ժիշտ է, նախարարութեան մի քանի նախածնունդութիւններ, որոնք զգալի մի-
ջոցներ ու ժամանակ էին պահանջում, չիրականացան, բայց այն, ինչ կատարեց
նախարարութիւնը դժոխային պայմաններում, անգնահատելի է: Իրականացված
զաղափարները ժողովրդի մեջ կենդանի ու վառ էին պահում սերն ու հոգատա-
րութիւնը մշակույթի ու արվեստի նկատմամբ:

Ներկա ուսումնասիրութիւնը ավարտվում է եզրակացութիւնով, որտեղ
հենվելով շարադրանքի վրա, հանգել ենք հետեւութիւնների, հիմնավորել այն
տեսակետը, որ հանրապետութեան ներքին անմխիթար վիճակի պատճառները հիմ-
նականում արդյունք էին երկրի ժողովրդական տնտեսութեան կազմալուծման,
կազմալուծում, որի գործընթացը սկսվել էր դեռևս առաջին աշխարհամարտի ժա-
մանակ և շարունակվեց թուրքական արշավանքի ու Անդրկովկասի իշխանութիւն-
ների հակահայկական քաղաքականութեան հետևանքով:

Այնուհետև՝ տնտեսական վիճակի բարելավման, գոնե տանելի պայմաններ
ստեղծելու, սովի ու հիվանդութիւնների դեմ պայքարի գործում կառավարու-
թեան անհաջողութիւնների հիմնական պատճառը երկրի սպառված հնարավորու-
թեւններն էին, արտաքին կապերի բացակայութիւնը, հարեան հանրապետու-
թեւնների ու Թուրքիայի կանխամտածված քաղաքականութիւնը:

Ամփոփելով ուսումնասիրութիւնը, հստակ կարելի է դիրքորոշվել այն
հարցում, որ, չնայած զրկանքներին ու կորուստներին, իրականացված ու ան-
իրագործելի մնացած նպատակներին ու կանխատեսումներին, Հայաստանի առաջին
հանրապետութիւնը իր գոյութեամբ ապահովեց հայ ժողովրդի դարավոր երազան-
քի իրականացումը, վառ պահեց պետականութեան զգացումը: Դա էլ հիմք հան-
դիսացավ Հայաստանի երկրորդ հանրապետութեան համար, որի վրա է բարձրա-
նում մեր այսօրվա անկախ պետականութիւնը՝ Հայաստանի հանրապետութիւնը:

1 ,,Սովետական Արվեստ,, , 1972 թ., թիւ 2, էջ 37:
2 Ս.Վրացյան, Հայաստանի հանրապետութիւնը, Փարիզ, 1928, էջ 442: